ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Տարածքի վարձակալության մասին պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

քաղաք Երևան, երեսունմեկը հուլիսի երկու հազար քսաներեք թվականի

«ՎԱՐԴԱՆԱՆՑ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (պետական գրանցման համար՝ 222.110.27792 (երկու երկու երկու. մեկ մեկ զրո. երկու յոթ յոթ ինը երկու), գրանցման օր՝ 17.08.2011թ. (երկու հազար տասնմեկ թվականի օգոստոսի տասնյոթ), ՀՎՀՀ 02601694 (զրո երկու վեց զրո մեկ վեց ինը չորս), գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան, Վարդանանց փողոց փակուղի, 8 (ութ) շենք, թիվ 3/2 (երեք կոտորակ երկու) տարածք. այսուհետ՝ Վարձատու), ի դեմս տնօրեն Համբարձում Մինասյանի, որը գործում է Վարձատուի կանոնադրության հիման վրա, որի անունից, համաձայն լիազորագրի, հանդես է գալիս լիազոր ներկայացուցիչ Ալբերտ Ջիվանի Առուստամյանը (ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ՝ 008041402 (զրո զրո ութ զրո չորս մեկ չորս զրո երկու), տրված՝ 01.07.2015թ. (երկու հազար տասնյոթ թվականի հուլիսի մեկին), 005-ի (զրո զրո հինգի) կողմից, ծնված՝ 09.04.1964թ. (հազար ինը հարյուր վաթսունչորս թվականի ապրիլի իններին), հաշվառված՝ ՀՀ, քաղաք Երևան, Գալշոյան փողոց, 14 (տասնչորս) շենք, 50 (հիսուն) բնակարան հասցեում)՝ մի կողմից, և

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ» ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ (գրանցման համարը՝ 264.184.1017475 (երկու վեց չորս. մեկ ութ չորս. մեկ զրո մեկ յոթ չորս յոթ հինգ), ՀՎՀՀ 00061508 (զրո զրո զրո վեց մեկ հինգ զրո ութ), գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան 19 (տասնինը). այսուհետ՝ Վարձակալ), հանդիսանալով «Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի իրավահաջորդը՝ օրենքի ուժով, ի դեմս գլխավոր քարտուղար Վազգեն Հարությունյանի, որը գործում է Վարձակալի կանոնադրության հիման վրա, որի անունից, համաձայն լիազորագրի, հանդես է գալիս լիազոր ներկայացուցիչ Գուրգեն Վլադիմիրի Մանասյանը (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AT 0674333 (զրո վեց յոթ չարս երեք երեք երեք), տրված՝ 22.02.2021թ. (երկու հազար քսանմեկ թվականի փետրվարի քսաներկուսին), 011-ի (զրո մեկ մեկի) կողմից, ծնված՝ 29.09.1980թ. (հազար ինը հարյուր ութսուն թվականի սեպտեմբերի քսանիններին), հաշվառված՝ ՀՀ, քաղաք Երևան, Այգեձորի փողոց, 10 (տասը) տուն հասցեում)՝ մյուս կողմից, որոնք ստորև առանձին հիշատակվում են նաև որպես «Կողմ» և միասին՝ որպես «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով և Կողմերի միջև 27.08.2009թ.-ին կնքված Տարածքի վարձակալության մասին պայմանագրով (գրանցված սեղանամատյանում 5319 համարով. այսուհետ՝ Պայմանագիր), եկան փոխադարձ համաձայնության՝ Պայմանագրում 01.07.2023թ.-ից (երկու հազար քսաներեք թվականի հուլիսի մեկից) հետևյալ փոփոխությունը կատարելու մասին.

1. Պայմանագրի 3.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «3.1. Վարձակալը Տարածքի տիրապետման և օգտագործման համար որպես վարձավճար Վարձատուին վճարում է ամսական 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկային պարտավորությունները:»:

2. Պայմանագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

3. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող /դադարող/ իրավունքները, Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ենթակա են 30-օրյա ժամկետում պետական գրանցման՝ ՀՀ Կադաստրի պետական կոմիտեում, որի հետ կապված անհրաժեշտ ծախսերը կատարում է Վարձակալը:

5. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կնքելուց և նոտարական կարգով վավերացնելուց հետո՝ ՀՀ Կադաստրի կոմիտեում պետական գրանցման պահից:

6. Համաձայնագիրը կնքված է հայերեն, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի ստորագրությունները:

Վարձատուի լիազորված անձ

Ալբերտ Ջիվանի Առուստամյան

ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ՝ 008041402,
ՀՀ, Երևան, Գալշոյան փողոց, 1/4 շենք, 50 բնակարան

ստորագրություն

Հայկերտ Հուստամյան

անուն, ազգանուն

Վարձակալի լիազորված անձ

Գուրգեն Վլադիմիրի Մանասյան

ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AT 067433
ՀՀ, քաղաք Երևան, Այգեձորի փողոց, 10 տուն

ստորագրություն

Գուրգեն Մանասյան

անուն, ազգանուն

Նոտարական ակտի կոդ: 437-20230731-117-7161322
Նոտարական ակտի գաղտնագիր: JWZVPF

երկու հազար քսաներեք թվականի հուլիսի երեսունմեկին
սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Երևան
նոտարական տարածքի նոտար՝ Նունե Ռազմիկի Սարգսյանիս կողմից:
Համաձայնագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ քաղաքացու/ների կողմից: Համաձայնագիր
ստորագրած անձի /անձանց/ ինքնությունը, գործունակությունը ինչպես նաև / իրավաբանական
անձ/անձանց/ իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:
Գրանցված է գրանցամատյանում N 18254
Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ
դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների:

Նոտար Նունե Ռազմիկի Սարգսյան